

նել, քան թե զամենայն աւր զեկեղեցւոյ եւ զքրիստոնէութեան¹ զարհամարհանս տեսանել եւ զքակտումն»:

15 Եւ լուեալ զանուն մահուան Մամիկոնէին Վահանայ եւ քաջի եղբարւորա Վասակայ՝ քաջալերեալք զաւրացան, եւ լցեալք սուրբ Յոգւոյն շնորհիւ յորդորեցան: 16 Սկսաւ խաւսել Մամիկոնեանն Վահան եւ ասէ. «Դուք գիտեք, զի Վարդ իմ եղբայր ի դրանն է. եւ գիտեմ, թէ լուեալ է զխորհուրդս մեր Պարսկաց՝ կապեն զնա եւ վշտացուցանեն. բայց ի մահ յաւժար եմ քան թէ այսպէս կեալ ուրացութեամբ. եւ յա՛յդ քան² հաւանիմ ձեզ, որ ոք կարէք առնել: 17 Եւ ամենագիտին հայեցեալ ի դարձս իմ, եւ ծանուցեալ, թէ արդարեւ յամենայն սրտէ է իմ դարձիս կամք՝ արասցէ յիս նշան բարի եւ դարձուցէ առ իս զանձկալի³ եղբայրն իմ զՎարդ ողջ, եւ տացէ տեսանել զնա աչաց իմոց⁴ եւ ուրախանալ. եւ ապա կատարեսցէ ի վերայ իմ զհաճոյսն իւր, որ ինչ թուիցի յաչս նորա»:

18 Եւ զայս ասացեալ՝ յառնեն ամենեքեան միաբանութեամբ, քրիստոնեայքն եւ ուրացեալքն, եւ յաղաւթս կացեալ ինդրեն զԱւետարանն սուրբ: 19 Եւ մատուցեալ յառաջ սրբոյ⁵ քահանային, որում անուն էր Աթիկ⁶, որ էր ընդ նոսա ի բանակին, այր բանիբուն բանիւ եւ խորհրդապահ սրտիւ, յերեւելի գեղջէն որ կոչի Բճնի, եւ բերեալ սուրբ Աւետարան՝ ողջունէին ամենեքեան, եւ եղեալ իւրաքանչիւր ուրուք զձեռս ի վերայ՝ ասէին, թէ «Որ ոք խոստովանեսցի զհաւատս զայս, զոր Փրկիչն ամենեցուն եւ տէր Յիսուս Զրիստոս վարդապետեալ գրեաց ի սմա՝ եւ Որդի մարդոյ խոստովանեալ տարցի զնա⁷ առաջի Հաւր իւրոյ, ժառանգեցուցանել⁸ նմա զերկնից բարութիւնսն: 20 Եւ որ ոք խոտորեալ ուրացի ի հաւատոյս յայսմանէ եւ նենգեալ ստեսցէ Աւետարանիս երդման՝ եւ Որդի մարդոյ ուրացեալ հանէ զնա ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանցն»:

21 Եւ այսպէս երդուեալք ի գիշերին եւ հաստատեալք ի հաւատն Զրիստոսի եւ հրաժարեալք ի միմեանց՝ յիւրաքանչիւր վանս⁹ զնացին հանգչել:

ԿԷ. Մի ոմն անդէն եւ անդ ի նախարարացն հայոց, որում անուն էր Վարազ-շապուհ, ի տոհմէն Ամատունեաց, ելեալ ի խորհրդենէ միաբանու-

1 ՏՏ. զքրիստոնէից

2 ՁԱտ. ցայդ քան

3 Ձ. զզանձկալի

4 Ձ. աչաց իմոց զնա

5 Գտ. չիք սրբոյ

6 ՏՏ. որում անուն Աթիկ

7 Ձ. տարցի զնոսա

8 Ձ. եւ ժառանգեցուցանել

9 Ձ. յիւրաքանչիւր վանս